# ՍԱՂՄՈՍԱՎԱՆՔԻ ԳՐԱՑՈՒՑԱԿԻ ԳՐՎԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ

ՎԻԿՏՈՐ ՊԵՏՐՈՍՅԱՆՑ

*Գրացուցակը գրադարանային ունեցվածքի ցանկն է։*

*Հնում էլ գրադարաններում կազմվել են գրացուցակներ։ Միջնադարում թե՛ եվրոպական, թե՛ հայկական գրադարաններում, այս ցուցակներն առաջին հերթին գույքացուցակի դեր էին կատարում, բայց, ամենայն հավանականությամբ, դրանց օգնությամբ նաև սպասարկում է կատարվել։ Միջնադարյան Հայաստանի գույքացուցակ-գրացուցակներից միայն Սաղմոսավանքինն է հասել մեզ։*

*1912 թ. մայիսի 29-ին Սաղմոսավանքի[1] ձորի այրերից մեկի սեղանի խորշում Խ. Դադյանը հայտնաբերել է մի քանի մագաղաթյա պահպանակներ ու Սաղմոսավանքի գրատան գրքերի ցուցակը և 1913 թ. հրատարակել[2]։*

*Գրացուցակը գրված է երկու թերթի չորս երեսների վրա՝ «Այս գիրք Սաղմոսավանից» վերնագրով։ Մագաղաթյա թերթերի բարձրությունը 8, իսկ լայնությունը՝ 6 սմ է, գիրը՝ նոտրգիր, միասյուն։ Ցուցակի կազմողները գրել են գրադարանի գրքերի անունները, յուրաքանչյուր անվան դիմաց նշել օրինակների քանակը, տվել գրքի նյութի, գրատեսակի, գրքի վիճակի մասին տեղեկություններ։ Ահա մի քանի օրինակ.*

*«Ինն աւետարան երկաթագիր որն մագ[ա]ղ[ա]թ, որն թուղթ։*

*Դ. Տօնապա[տ]ճառ։*

*Բ. Սարգիս գիրք, մէկ հին, մէկ նոր» (1ա էջ)։*

*«Ա. Գիր ամենահրաշն մէջ և այլ բազում խրատական բանք և սահմանք» (1 բ էջ)։*

*«Ա. Գիրք եւ Յովհաննես վարդապետի» (2ա էջ)։*

*«Ա. Հին գիրք եւ ժողովածու խառն և խուռն» (2բ էջ)[3] և այլն։*

*Գրացուցակում այս ձևով նշված է ընդամենը 113 գիրք։ Խ. Դադյանը գրացուցակը չի թվագրել։ Ավելի ուշ Ռ. Իշխանյանը Սաղմոսավանքի գրացուցակը համարել է XV դ. գործ[4], և այդ թվագրումով էլ այն մտել է մասնագիտական գրականության մեջ[5]։ Սակայն փաստերը վկայում են, որ Սաղմոսավանքի գրացուցակը ստեղծվել է XIII դ. առաջին կեսում։*

---

[1] *Սաղմոսավանքը գտնվում է Աշտարակի շրջանի հյուսիսային կողմում, Քասաղ գետի աջ ափին։ Հնում մտել է Արագածոտն գավառի մեջ։*

[2] *Խաչիկ Ծ. վարդապետ, Նորագյուտ մագաղաթյա նոտրգիր ցուցակ Սաղմոսավանից Մատենադարանի («Շողակաթ», Վաղարշապատ, 1913)։*

[3] *Նույն տեղում, էջ 167—169։*

[4] *Ռ. Իշխանյան, Հայ մատենագիտության պատմություն, պրակ Ա, Երևան, 1964, էջ 124։*

[5] *Է. Կորկոտյան, Գրադարանային գրացուցակներ, մեթոդական ձեռնարկ գրադարանավարների և գրադարանային բաժնի ուսանողների համար, Երևան, 1976, էջ 20։*

Գրացուցակի տակ կա մի ընծայաբերական հիշատակարան, որի վրա, սակայն ցարդ ուշադրություն չի դարձվել, մինչդեռ նրա ուսումնասիրությունը թույլ է տալիս որոշելու գրացուցակի գրվելու ժամանակը։ Ահա այդ հիշատակարանը. «Շնորհ[ի]ք բարերարին ա[ստուծո]յ, ես Վաչէ, որդի Քրիստին, որդւոյն Վաչէի և եղբայրն իմ Դաւիթ, և ամուսինն իմ Մամախաթունն ցանկացաք զսեր արարչին և շինեցաք սուրբ ուխտս Սաղմոսավանք և ետու հալալ ընչիցն ԺՌ սպիտակ և առի մեծ պատրոնէն՝ Զաքարիայէն գմուլքն Ս[ա]ղ[մո]սավանից և կէսն իմ եղբօրն պարոն Դաւթին հոգւոյն որ առ Ք[րիստո]ս է փոխել։ Վերստին հաստ[ատ]եցի մլքի կէսն վախմ դուռն Ս[ա]ղ[մո]սավանից։ Եթէ իմոց և օտարաց և այլ և այլ անէ երեղ ս[ուր]բ ժ[ո]ղ[ո]վոյն նվազեալ եղիցի, մասն Ուդայի առցէ և պատիժն Կայենի կրէ։ Ի թվ[ա]կ[ա]նին ՈԿԴ-ին»[6]։

Տեսնենք, թե ո՞վ է հիշատակարանի հեղինակ Վաչեն և ե՞րբ է գործել։

Ինչպես հայտնի է, XIII դ. սկզբներին Զաքարե և Իվանե Զաքարյանները գրավելով Արագած լեռան ստորոտները, այդտեղ հաստատեցին Վաչե Ա Վաչուտյանին՝ նրան տալով Նիգ ու Արագածոտն գավառները. Արարատյան կողմնակալի պաշտոնը և իշխանաց իշխան տիտղոսը[7]։ Այս Վաչեն և նրա հաջորդները շինարարական մեծ աշխատանքներ կատարեցին իրենց հայրենի հողերում և մշակութային այլ կենտրոններում։ Հենց այս Վաչեի թոռն է հիշատակարանագիր Վաչեն՝ Քրդի որդին։

Վաչե Ա Վաչուտյանը 1215 թ. ավարտեց Սաղմոսավանքի կաթողիկե եկեղեցու կառուցումը։ Դարի 40-ական թվականներին եկեղեցուն կից գավիթը կառուցում է նրա թոռը՝ Քուրդ իշխանաց իշխանի որդի Վաչե Բ-ն։ Համալիրի վերջին կառույցը դրատունն է. այն 1255 թ. կառուցել է Քուրդ իշխանը, կնոջ՝ Խորիշահի, համագործակցությամբ։ Գրատունը կառուցվել է նրանց վաղամեռիկ դստեր՝ Մամախաթունի հիշատակին։

Մենք արդեն տեսանք, որ հիշատակարանագիր Վաչե Բ-ն՝ Սաղմոսավանքի գավիթը կառուցողը, վանքի գրատունը կառուցած Քուրդ Վաչուտյանի որդին է։ Այժմ տեսնենք, թե երբ է նա գործել։ Հիշատակարանի տակ նշված թվականը՝ ՈԿԴ (1215), սխալ է։ Ճիշտ թվականը որոշելու գործում մեզ օգնում է հիշատակարանում նշված պատրոնի՝ Զաքարեի անունը, որից Վաչե Բ-ն գնել է Սաղմոսավանքին տված ընծաները։ Քննվող 1215 թ. Զաքարե ամիրսպասալարը մահացած էր, ուստի չէր կարող հիշատակվել ընծայաբերականում։ Հետևաբար, այս Զաքարեն Զաքարե ամիրսպասալարի թոռն է՝ Շահնշահի որդին։ Զաքարե Բ-ն և Վաչե Բ-ն չէին կարող 1215 թ. գործարք կնքել, քանի որ կա՛մ դեռ չէին ծնվել, կա՛մ մանկահասակ էին։ Մեր հիշատակարանի թվականի (ՈԿԴ) մեջ տասնավորը՝ Կ(60)-ն պետք է սրբագրել Ղ(90)։ Այդ դեպքում հիշատակարանի գրվելու ժամանակը կլինի 1245 թ., որը համընկնում է Զաքարե Բ-ի և Վաչե Բ-ի գործելու ժամանակին։

Այստեղից կարելի է եզրակացնել, որ XIII դ. գործիչը չէր կարող հիշատակարան գրել XV դ. ստեղծված գրացուցակի վրա։ Ուրեմն, գրացուցակը և ընծայաբերական հիշատակարանը ժամանակակից են։ Հիշատակարանը գրվել է 1245 թ., իսկ գրացուցակը կարող էր կազմվել ավելի շուտ, երբ անհրա-

---

6 «Շողակաթ», էջ 169։

7 «Զ ա ք ա ր ի ա յ սարկաւագի պատմագրութիւն», հ. Գ, Վաղարշապատ, 1870, էջ 12։

ժեշտություն է առաջացել իմանալու, թե մշակութային նորաստեղծ օջախում ինչքան գրքեր կան, ինչ վիճակում են դրանք կամ ամենաուշը 1245 թ., երբ նրա վրա գետեղվել է Վաչե Բ-ի ընծայաբերական հիշատակարանը։

Մենք չենք կիսում Ռ. Իշխանյանի նաև այն կարծիքը, որ «XV դարում Սաղմոսավանքի գրատունը իր մեծությամբ այն ամենախոշոր գրադարաններից չէր, որոնք կային դրանից առաջ և այդ նույն ժամանակաշրջանում Հայաստանի մեջ։ Բացի այդ, հիմք կա մտածելու, որ ցուցակում ընդգրկված է Սաղմոսավանքի գրականության մի մասը»[8]։

Այս միտքն իր հերթին արդյունք է գրացուցակը XV դ. թվագրելու. բացի այդ, գրացուցակն անպայման պետք է ընդգրկեր վանքում պահվող ամբողջ գրականությունը։ Արդեն նշվեց, որ Սաղմոսավանքի եկեղեցական համալիրը կառուցվել է 1215—1255 թթ.։ Հենց այդ շրջանում էլ, ամենաուշը՝ 1245 թ., կազմվել է գրացուցակը։ Այդպիսով, գրացուցակն արտացոլում էր նորաստեղծ մշակութային օջախի գրադարանի ունեցվածքը և այդ է պատճառը, որ նրա ֆոնդը այդքան աննշան էր (113 կտոր գիրք)։ XIII դ. երկրորդ կեսում և XIV—XV դդ. Սաղմոսավանքը ծաղկում է ապրել. այստեղ գործել են տասնյակ գրիչներ ու մշակութային գործիչներ։ Նրանք ստեղծել են բավական մեծ թվով գրքեր, որոնց միայն աննշան մասն է հասել մեր օրերը։ Կարծում ենք, որ XIII—XV դդ. Սաղմոսավանքի գրատունը Հայաստանի խոշոր գրատներից է եղել։

## ВРЕМЯ СОЗДАНИЯ САГМОСАВАНКСКОГО КАТАЛОГА

ВИКТОР ПЕТРОСЯНЦ

### Резюме

В 1912 г. Х. Дадьяном был найден каталог книг Сагмосаванкского книгохранилища. Позднее каталог был неверно датирован XV в. В конце каталога имеется памятная запись Ваче II— одного из представителей княжеского дома Вачутян, жившего в середине XIII в. Памятная запись относится к 1245 г., каталог тоже был создан в это время.

---

8 Ռ. Իշխանյան, նշվ. աշխ., էջ 124։